ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ, ԾԱԽՍԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՁԿ-ԳՀԾՁԲ-24/1-Ն

ք. Երևան «04» մարտի 2024թ.

Ջրային կոմիտեն ի դեմս գլխավոր քարտուղար Ա. Ղազարյանի, որը գործում է Կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Մոդուլ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ն. Հակոբյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է նախագծերի պատրաստման, ծախսերի գնահատման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս կողմից մատուցված պատշաճ ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ վճարան ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու պատշաճ մատուցված ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության պատշաճ մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

2.4.4 Շինարարական աշխատանքների կատարման ընթացքում նախագծային շեղումներ առաջանալու դեպքում Կատարողը Պատվիրատուին վճարում է տուգանք՝ յուրաքանչյուր արձանագրված շեղման հետևանքով առաջացած կորստի չափով: Ընդ որում՝

ա. շեղում է համարվում շինարարական աշխատանքների կատարման ընթացքում սկզբնական նախագծի տասը տոկոսը գերազանցող լրացուցիչ ծավալի աշխատանքների ի հայտ գալը, իսկ տուգանքի չափը հավասար է լրացուցիչ ծավալի աշխատանքների արժեքի քսանհինգ տոկոսին,

բ. կորուստ են համարվում նախագծային այնպիսի շեղումները, որոնք հանգեցնում են փաստացի կատարված աշխատանքների փոփոխմանը (քանդման, վերակառուցման և այլն) և լրացուցիչ աշխատանքների կատարմանը, իսկ տուգանքի չափը հավասար է կորստի հանգեցրած՝ փաստացի կատարված աշխատանքների արժեքի հիսուն տոկոսին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 15 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 22 773 000 (քսաներկու միլիոն յոթ հարյուր յոթանասուներեք հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է պայմանագրի 3-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում՝ ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-

ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

2. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[1] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն սահմանված ժամկետում չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորություններն ամբողջությամբ և պատշաճ՝ պայմանագրով սահմանված պահանջներին համապատասխան կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված

Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:

համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի գրավոր առաջարկի առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի համար ծառայության մատուցման պահանջը չի վերացել, իսկ Կատարողի գրավոր առաջարկը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման շրջանակներից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 12 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Ջրային կոմիտե
ՀՀ ք. Երևան, Վարդանանց 13ա
Հ/Հ 900011567386
ՀՎՀՀ 02555816
Կոմիտեի գլխավոր քարտուղար

_____ Ա. ՂԱՋԱՐՅԱՆ
(ստորագրություն)
Կ.Տ.

Կ Ա Տ Ա Ր Ո Ղ

«Մոդուլ» ՍՊԸ
Ք. Երևան, Ն.Զարյան 22, տարածք 3
էլ. հասցե info@modul.am
«ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ Կոմիտաս մ/ճ
Հ/Հ 11500404281400
ՀՎՀՀ 05020542

_____ Ն. ՀԱԿՈԲՅԱՆ
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 1
«04» [illegible] 2024թ. կնքված
ՋԿ-ԳՀԾՁԲ-24/1-Ն ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախա-տեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը ներկայացվում է ստորև***	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	ժամկետը**
1	71241200/1	Նախագծերի պատրաստում, ծախսերի գնահատում - Աշտարակի մայր ջրանցքի ՊԿ0+00-ՊԿ20+00 հատվածի վերանորոգում	դրամ	3 300 000	1	ք. Երևան, Վարդանանց 13ա	Պայմանագրի ուժի մեջ մնտնելուց հետո՝ 90 օր
2	71241200/2	Նախագծերի պատրաստում, ծախսերի գնահատում - «Արազափ-1» ջրհան կայանի երկրորդ գոտու աջ հեռացնող ջրատարի վերակառուցում	դրամ	1 638 000	1	ք. Երևան, Վարդանանց 13ա	Պայմանագրի ուժի մեջ մնտնելուց հետո՝ 90 օր
4	71241200/4	Նախագծերի պատրաստում, ծախսերի գնահատում - Մրգաշատ համայնքի Սոնեյի և Վալոդի խորքային հորերի հեռացնող ջրանցքների ինչպես նաև դրանց հատման տեղից դեպի հողատարածքներ գնացող ջրանցքների վերակառուցում	դրամ	3 195 000	1	ք. Երևան, Վարդանանց 13ա	Պայմանագրի ուժի մեջ մնտնելուց հետո՝ 60 օր
7	71241200/7	Նախագծերի պատրաստում, ծախսերի գնահատում - Ծովինարի մեծ առու ջրանցքի հիմնանորոգում	դրամ	2 100 000	1	ք. Երևան, Վարդանանց 13ա	Պայմանագրի ուժի մեջ մնտնելուց հետո՝ 60 օր
	71241200/10	Նախագծերի պատրաստում, ծախսերի				ք. Երևան, Վարդան	Պայմանագրի ուժի մեջ

10		գնահատում - Բարձրաշենի հեռացնող ջրանցքի մոտ 400 մ հատվածի վերակառուցում	դրամ	3 120 000	1		մնտելուց հետո՝ 60 օր
12	71241200/12	Նախագծերի պատրաստում, ծախսերի գնահատում - Բ-1 և Բ-1-1 ջրանցքների վերակառուցում	դրամ	2 820 000	1	ք. Երևան, Վարդանանց 13ա	Պայմանագրի ուժի մեջ մնտելուց հետո՝ 90 օր
17	71241200/17	Նախագծերի պատրաստում, ծախսերի գնահատում - Արտամետի «Զույգ ցանց» ներտնտեսային ջրանցքի վերակառուցում	դրամ	2 700 000	1	ք. Երևան, Վարդանանց 13ա	Պայմանագրի ուժի մեջ մնտելուց հետո՝ 60 օր
18	71241200/18	Նախագծերի պատրաստում, ծախսերի գնահատում - Նախագծերի պատրաստում, ծախսերի գնահատում - Աջափնյա ջրանցքի առավել վթարային հատվածների վերակառուցում	դրամ	3 900 000	1	ք. Երևան, Վարդանանց 13ա	Պայմանագրի ուժի մեջ մնտելուց հետո՝ 90 օր

<u>ՉԱՓԱԲԱԺԻՆՆԵՐ 1, 2, 4, 7, 10, 12, 17, 18</u>

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ***

Առաջադրանքի պայմանները

Չափաբաժին 1
Աշտարակի մայր ջրանցքի ՊԿ0+00-ՊԿ20+00 հատվածի վերանորոգում

ՆԱԽԱԲԱՆ

Աշտարակի մայր ջրանցքը կառուցվել է Ուրարտուական ժամանակաշրջանում, իրենից ներկայացնում է հողային և քարե շարվածքով ջրանցք: Ջրանցքը անցնում է Քասախ գետի թեք լանջով, պատերը ժամանկ առ ժամանակ փուլ են գալիս՝ ամբողջովին քանդելով ջրանցքը ինչի հետևանքով դադարում է համայնքների ջրամատակարարումը:

Առկա հիմնախնդիրների լուծումներն ու դրանց հիմնավորումը

Ոռոգման ջրի կորուստները գերազանցում են նորմաներից: Ոռոգման համակարգերի արդիականցման ծրագրերի շրջանակներում վերակառուցվել է ջրանցքի մի հատվածը, այս պահին անհրաժեշտ է վերակառուցել ՊԿ0+00-ՊԿ20+00 հատվածը պահպանելով ջրանցքի նույն կտրվածքը: Աշտարակի մայր ջրանցքի 2 կմ հատվածն ունի ուղիղ կտրվածք՝ 1.5մ խորությամբ և 1մ հատակի լայնությամբ:

Ակնկալվող արդյունքները

Աշտարակի մայր ջրանցքի թերությունները վերացնելուց հետո ոռոգման ջուր մատակարարելու ընթացքում կկրճատվեն ջրի կորուստները, կպակասի ջրանցքի շահագործման և պահպանման ծախսերը, կբարձրանա ջրամատակարարման կազմակերպման որակը, կավելանա ջրօգտագործողների թիվը:

Սույն առաջադրանքով նախատեսվում է իրականացնել վերակառուցման աշխատանքներ նշված ջրանցքի ՊԿ0+00-ՊԿ20+00 հատվածում:

Ձափաբաժին 2
«Արազափ-1» ջրհան կայանի երկրորդ գոտու աջ հեռացնող ջրատարի վերակառուցում

ՆԱԽԱԲԱՆ

«Արազափ-1» ջ/կ երկրորդ գոտու աջ հեռացնող ջրատարը կառուցվել է 1978թ.-ին LR-60 կիսախողովակներով, որոնք այժմ քայքայված են, ջրատարի ընդհանուր երկարությունը կազմում է շուրջ 2100 գծ.մ:

Առկա հիմնախնդիրների լուծումներն ու դրանց հիմնավորումը

Ջրատարի վրա առկա են որոշ հատվածներ, որոնք վերածվել են հողային հունոի, իսկ որոշ մասն էլ գտնվում է տեխնիկապես անմխիթար վիճակում որի պատճառով տեղի են ունենում ոռոգման ջրի զգալի կորուստներ: Ջրատարի ընդհանուր երկարությունը կազմում է շուրջ 2100 գծ.մ, որի սպասարկման տակ գտնվող հողատարածքները կազմում են շուրջ 100 հա, ջրթողունակությունը՝ մոտ 120-150 լ/վրկ: Անհրաժեշտ է վերակառուցել ջրատարն ամբողջությամբ և կառուցել նախնական գնահատմամբ 25 հատ ջրթող հանգույցներ հարթ փականով:

Ակնկալվող արդյունքները

«Արարատ» ՋՕԸ-ն առաջարկում է նշված ջրատարն ամբողջությամբ վերակառուցել, ինչի արդյունքում կկրճատվեն ոռոգման ջրի կորուստները, ջուրը արդյունավետ կկառավարվի, կպակասեն ջրանցքների շահագործման և պահպանման ծախսերը: Ոռոգման ջրի կորուստների կրճատման արդյունքում հնարավոր կլինի ոռոգելի դարձնել հավելյալ հողատարածքներ, որոնք այս պահին չեն մշակվում ջրի անբավարար լինելու պատճառով:

Սույն առաջադրանքով նախատեսվում է իրականացնել վերակառուցման աշխատանքներ «Արազափ-1» ջ/կ երկրորդ գոտու աջ հեռացնող ջրատարի վրա:

Ձափաբաժին 4

Մրգաշատ համայնքի Սոնեյի և Վալոդի խորքային հորերի հեռացնող ջրանցքների ինչպես նաև դրանց հատման տեղից դեպի հողատարածքներ գնացող ջրանցքների վերակառուցում

ՆԱԽԱԲԱՆ

1957թ-ից շահագործվող «Սև ջուր» ջրհան կայանի հեռացնող ջրանցքը ջուր է մատակարարել Արմավիրի մարզի Մրգաշատ գյուղի ոռոգելի հողատարածքներին: Վերջին 25 տարիներին Սև ջուր գետի անբավարար ջրատվության պատճառով, որպես այլընտրանք Մրգաշատ գյուղում ոռոգման նպատակով շահագործվում է 13 խորքային հորեր:

Առկա հիմնախնդիրների լուծումներն ու դրանց հիմնավորումը

«Սև ջուր» ջրհան կայանի հեռացնող ջրանցքը Մրգաշատ գյուղի հատվածում սեղանաձև կտրվածքով ջրանցք է 1.0մ հատակի լայնությամբ, 1.5մ խորությամբ, շեպերի թեքությունը 1:1-ի: «Վալոդի» կոչվող խորքային հորի արտադրած ջուրը նշված ջրանցքով տեղափոխելու ընթացքում տեղի է ունենում ժամանակի և ջրի կորուստներ: «Սոնեյի» կոչվող խորքային հորի ջուրը տեղափոխվում է Г-աձև անավարտ ջրանցքով, նշված ջրանցքով տեղափոխելու ընթացքում նույնպես տեղի է ունենում ժամանակի և ջրի կորուստներ:

Ակնկալվող արդյունքները

«Արմավիր» ՋՕԸ-ն առաջարկում է նշված հատվածներում ջրի տեղափոխումը իրականացնել նոր երկաթբետոնե կիսախողովակներով, ինչի արդյունքում կկրճատվի ոռոգման ջրի կորուստները, ջուրը արդյունավետ կկառավարվի, կպակասի ջրանցքների շահագործման և պահպանման ծախսերը: Ոռոգման ջրի կորուստների կրճատման արդյունքում հնարավոր կլինի 15հա հավելյալ հողատարածք դարձնել ոռոգելի որոնք այս պահին չեն մշակվում ջրի անբավարար լինելու արդյունքում:

Սույն առաջադրանքով նախատեսվում է իրականացնել վերակառուցման աշխատանքներ թվով 3 ջրանցքներում:

Ձափաբաժին 7
Ծովինարի մեծ առու ջրանցքի հիմնանորոգում

ՆԱԽԱԲԱՆ

Մեծ առու /Ծովինար/ ջրանցք կառուցվել է 1920թ-ին այն ունի սեղանաձև կտրված ընհանուր երկարությունը կազմում է 9000մ: Ջրանցքը ամբողջությամբ քայքայվել է, նախկինու երկու ծրագրերի արդյունքում վերակառուցվել է համապատասխանաբար 3000մ և 4500մ ջրանցքի հատվածները: Ջրանցքը ամբոջությամ ավարտելու համար անհրաժեշտ է մնացած 1500մ նույնպես հիմնանորոգել:

Առկա հիմնախնդիրների լուծումներն ու դրանց հիմնավորումը

Նշված ջրանցքի չվերանորոգված հատվածը գտնվում են անմխիթար վիճակում կառուցումից ի վեր այն երբեք չիվերանորոգվել, ջուրը նշված հատվածով տեղափոխելու ընթացքում տեղի է ունենում ժամանակի և ջրի կորուստներ:

Ակնկալվող արդյունքները

«Գեղարքունիք» ՋՕԸ-ն առաջարկում է նշված հատվածը հիմնանորոգել, ինչի արդյունքում կկրճատվի ոռոգման ջրի կորուստները, ջուրը արդյունավետ կկառավարվի, կպակասի ջրանցքների շահագործման և պահպանման ծախսերը: Ոռոգման ջրի կորուստների կրճատման արդյունքում հնարավոր կլինի հավելյալ հողատարածք դարձնել ոռոգելի որոնք այս պահին չեն մշակվում ջրի անբավարար լինելու արդյունքում:

Զափաբաժին 10
Բարձրաշենի հեռացնող ջրանցքի մոտ 400 մ հատվածի վերակառուցում

ՆԱԽԱԲԱՆ

Ջրանցքը սկիզբ է առնում Բարձրաշենի 2-րդ աստիճանի պ/կ-ից: Ջրանցքը երեսապատված է, սպասարկում է Արարատի մարզի Բարձրաշեն բնակավայրը և ք. Երևանի Նուբարաշեն վարչական շրջանը: Նշված ջրանցքում ոռոգման ջրի կորուստները կազմում են շուրջ 80%, ջրանցքի սկզբնամասում տեղադրված է SCADA ուլտրաձայնային մակարդակաչափ:

Առկա հիմնախնդիրների լուծումներն ու դրանց հիմնավորումը

Ջրանցքի երեսապատված հատվածները քայքայված են և դարձել են հողային, ջուրը նշված ջրանցքով տեղափոխելու ընթացքում տեղի է ունենում ժամանակի և ջրի կորուստներ:

Ակնկալվող արդյունքները

Ջրանցքի թերությունները վերացնելուց հետո ջրանցքը ոռոգման ջուր մատակարարելու ընթացքում կկրճատվեն ջրի կորուստները, կպակասի ջրանցքի շահագործման և պահպանման ծախսերը, կբարձրանա ջրամատակարարման կազմակերպման որակը, կավելանա ջրօգտագործողների թիվը: Կնվազի նաև էլեկտրաէներգիայի ծախսը:

Սույն առաջադրանքով նախատեսվում է իրականացնել վերակառուցման աշխատանքներ Բարձրաշենի հեռացնող ջրանցքի մոտ 400մ հատվածում:

Զափաբաժին 12
Բ-1 և Բ-1-1 ջրանցքների վերակառուցում

ՆԱԽԱԲԱՆ

Բ-1 ջրանցքը սպասարկում է Հայկաշեն և Մեծամոր բնակավայրերի հողատարածքները: Ջրթողունակությունը կազմում է 300լ/վրկ: Ջրանցքը ՊԿ00+00-ՊԿ04+80 սեղանաձև կտրվածքով մոնոլիտ բետոնից ջրանցք է հատակի լայնությունը 1.0մ բարձրությունը 1.2մ, իսկ ՊԿ38+00-ՊԿ43+00 հողային հունով ջրանցք է:

Բ-1-1 ջրանցքը սպասարկում է Մեծամոր և Հայկաշեն բնակավայրերի հողատարածքները: Ջրթողունակությունը կազմում է 300լ/վրկ: Ջրանցքը ՊԿ13+00-ՊԿ20+60 սեղանաձև կտրվածքով քարե շարվածքով ջրանցք է հատակի լայնությունը 1.0մ բարձրությունը 1.5մ:

Առկա հիմնախնդիրների լուծումներն ու դրանց հիմնավորումը

Բ-1 ջրանցքը նշված ՊԿ00+00-ՊԿ04+80 և ՊԿ38+00-ՊԿ43+00 հատվածներում քայքայված է, ջուրը ջրանցքով տեղափոխելու ընթացքում տեղի է ունենում ժամանակի և ջրի կորուստներ:

Բ-1-1 ջրանցքը նշված ՊԿ13+00-ՊԿ20+60 հատվածում քայքայված է, ջուրը ջրանցքով տեղափոխելու ընթացքում տեղի է ունենում ժամանակի և ջրի կորուստներ:

Ակնկալվող արդյունքները

«Էջմիածին» ՋՕԸ-ն առաջարկում է Բ-1 ջրանցքի ՊԿ00+00-ՊԿ04+80 հատվածում վերականգնել և երեսապատել քայքայված հատվածները իսկ ՊԿ38+00-ՊԿ43+00 հատվածում ջրի տեղափոխումը իրականացնել նոր երկաթբետոնե կիսախողովակներով, իսկ Բ-1-1 ջրանցքը նշված ՊԿ13+00-ՊԿ20+60 60 հատվածում վերականգնել և երեսապատել քայքայված հատվածները ինչի արդյունքում կկրճատվի ոռոգման ջրի կորուստները, ջուրը արդյունավետ կկառավարվի, կպակասի ջրանցքների շահագործման և պահպանման ծախսերը: Ոռոգման ջրի կորուստների կրճատման արդյունքում հնարավոր կլինի հավելյալ հողատարածք դարձնել ոռոգելի որոնք այս պահին չեն մշակվում ջրի անբավարար լինելու արդյունքում:

Սույն առաջադրանքով նախատեսվում է իրականացնել վերակառուցման աշխատանքներ Բ-1 և Բ-1-1 ջրանցքների նշված հատվածներում:

Զափաբաժին 17
Արտամետի «Զույգ ցանց» ներտնտեսային ջրանցքի վերակառուցում

ՆԱԽԱԲԱՆ

«Զույգ ցանց» ներտմտեսային ջրանցքը գտնվում է Արմավիրի մարզի Արտամետ համայնքում, կառուցվել է 1990թ-ին: Այն սկիզբ է առնում Թալինի ջրանցքի II-րդ հերթից և սպասարկում է Արտամետ համայնքի

հողատարածքները: «Զույգ ցանց» ներտմտեսային ջրանցքը D=400մմ տրամագծով երկու ասբոցեմենտային խողովակաշար է, յուրաքանչյուրի երկարությունը 2500մ

Առկա հիմնախնդիրների լուծումներն ու դրանց հիմնավորումը

Նշված խողովակները գտնվում են անմխիթար վիճակում կառուցումից ի վեր այն երբեք չիվերանորոգվել, ջուրը նշված զույգ ասբոցեմենտային խողովակներով տեղափոխելու ընթացքում տեղի է ունենում ժամանակի և ջրի կորուստներ:

Ակնկալվող արդյունքները

«Շենիկ» ՋՕԸ-ն առաջարկում է նշված զույգ ասբոցեմենտային քայքայված խողովակներ փոխարինել նոր խողովակներով, ինչի արդյունքում կկրճատվի ոռոգման ջրի կորուստները, ջուրը արդյունավետ կկառավարվի, կպակասի ջրանցքների շահագործման և պահպանման ծախսերը: Ոռոգման ջրի կորուստների կրճատման արդյունքում հնարավոր կլինի հավելյալ հողատարածք դարձնել ոռոգելի որոնք այս պահին չեն մշակվում ջրի անբավարար լինելու արդյունքում:

Սույն առաջադրանքով նախատեսվում է իրականացնել վերակառուցման աշխատանքներ «Շենիկ» ՋՕԸ-ի կողմից շահագործվող «Զույգ ցանց» ներտմտեսային ջրանցքը:

Չափաբաժին 18

Աջափնյա ջրանցքի առավել վթարային հատվածների վերակառուցում

ՆԱԽԱԲԱՆ

Աջափնյա ջրանցքը կառուցվել է 1976թ-ին ջրաղբյուրը Ախուրյան գետն է: Աջափնյա ջրանցքը սպասարկում է նախկին Ամասիայի և Ախուրյանի շրջանների մետ 7134հա հողատարածքներ: Ջրթողունակությունը կազմում է 5խմ/վրկ ըստ նախագծի: Ջրանցքի ընդհանուր երկարությունը կազմում է 23000մ որից մոտ 5950մ տարբեր տրամաչափի խողովակներ(D=1200մմ L=3800մ և D=1000մմ L=2150մ), մնացած հատվածը 17050մ բետոնյա ջրանցք:

Առկա հիմնախնդիրների լուծումներն ու դրանց հիմնավորումը

Աջափնյա ջրանցքի բետոնյա հատվածում մոտ 10կմ հատակը գրեթե ամբողջությամբ քայքայված է, ջրանցքի պատերը 70-80%-ով նույնպես քայքայված է, ջուրը նշված ջրանցքով տեղափոխելու ընթացքում տեղի է ունենում ժամանակի և ջրի կորուստներ:

Ակնկալվող արդյունքները

«Շիրակ» ՋՕԸ-ն առաջարկում է նշված 10 կմ հատվածի առավել քայքայված հատվածներից մոտ 3618մ վերանորոգել ՊԿ130+42-ՊԿ151+81 - 2139մ և ՊԿ157+41-ՊԿ172+20 1479մ, ինչի արդյունքում կկրճատվի ոռոգման ջրի կորուստները, ջուրը արդյունավետ կկառավարվի, կպակասի ջրանցքների շահագործման և պահպանման ծախսերը: Ոռոգման ջրի կորուստների կրճատման արդյունքում հնարավոր կլինի հավելյալ հողատարածք դարձնել ոռոգելի որոնք այս պահին չեն մշակվում ջրի անբավարար լինելու արդյունքում:

Սույն առաջադրանքով նախատեսվում է իրականացնել վերակառուցման աշխատանքներ Աջափնյա ջրանցքի 2 առավել վթարային հատվածներում:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔԻ ՆՊԱՏԱԿԸ

Աղյուսակում բերված են յուրաքանչյուր օբյեկտի հակիրճ բնութագրերը: Դրանք բավարար են, որպեսզի մրցույթին մասնակցող նախագծային կազմակերպությունները գնահատեն նախատեսվող նախագծային աշխատանքների ծավալները և ներկայացնեն հավաստի և իրատեսական տեխնիկական և ֆինանսական առաջարկներ: Նախագծերի մշակման ժամանակ նախագծային կազմակերպությունը պարտադիր կերպով պետք է ճշտի բոլոր օբյեկտների աշխատանքների ծավալները: Այդ նպատակով Նախագծողը պետք է.

- վերլուծի առաջ եկած խնդիրները, որոնց պետք է տրվեն նախագծային համապատասխան լուծումներ,
- կատարի բոլոր անհրաժեշտ ելակետային տվյալների հավաքագրումը՝ հաշվի առնելով համապատասխան ՋՕԸ-ի առաջարկությունները,
- վերլուծի ընտրված բնակավայրերի օբյեկտների համար նախկինում կատարված աշխատանքների նյութերը,
- կատարի ոռոգման համակարգերի նախագծման համար ինժեներա-երկրաբանական, գեոդեզիական և այլ տիպի հետազոտական աշխատանքներ, որոնք կապահովեն ընդունված նախագծային լուծումների հիմնավորումը,
- կատարի գոյություն ունեցող ոռոգման համակարգերի տեխնիկական վիճակների ուսումնասիրություն և կազմի թերությունների ակտեր: Թերությունների ակտը պետք է լիովին գնահատի օբյեկտի վիճակը և հիմնավորի առաջարկվող

կոնստրուկտիվ լուծումները վերանորոգման աշխատանքների իրականացման համար: Թերությունների ակտը կազմվում է Նախագծողի կողմից, ՋՕԸ-ի ներկայացուցիչների մասնակցությամբ,

- կազմված նախագիծը սահմանված կարգով համաձայնեցնի բոլոր շահագրգիռ կազմակերպությունների հետ,
- սահմանված կարգով փորձաքննության անցկացման արդյունքում, դիտողությունների առկայության դեպքում, կատարի ուղղումներ և լրամշակումներ՝ հաշվի առնելու փորձաքննության կողմից տրված դիտողությունները,
- կազմի շինարարական աշխատանքների կատարման համար օգտագործվող նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների տեխնիկական բնութագրերը ,Գնումների մասին ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի պահանջներին համապատասխան՝ օգտագործվող շինարարական նյութերի, պատրաստվածքների հատկանիշների վերաբերյալ ներկայացնի մանրամասն և սպառիչ նկարագրություն,
- ճշգրտի նշված հիդրոտեխնիկական կառույցի սպասարկման տակ գտնվող գյուղատնտեսական հողատարածքների ջրապահանջարկը, դրա հիման վրա հաշվարկի ջրատնտեսական հաշվարկներով ջրապահանջարկի լիարժեք ծածկմանը բավարարող նախագծվող ջրացքի ջրթողունակությունը:

Նախագծային կազմակերպությունը պետք է ներկայացնի հիմնական տեխնիկական լուծումների մշակված տարբերակներ և գնահատի դրանց արժեքը: Պատվիրատուն իրավունք ունի նախագծային կազմակերպության քննարկմանը ներկայացնել իր կողմից առաջարկվող տարբերակը: Նախագծային կազմակերպությունը պարտավոր է մինչև վերջնական ճարտարագիտական լուծումների ընդունումը քննարկի իր կողմից առաջարկվող լուծումները Պատվիրատուի և այլ շահագրգիռ կազմակերպությունների հետ համատեղ հանդիպման ժամանակ և միայն դրանից հետո անցնի մրցութային փաստաթղթերի թողարկմանը: Համատեղ հանդիպման արդյունքների մասին Պատվիրատուի կողմից կազմվում են համապատասխան արձանագրություններ:

Նախագծային կազմակերպությունը պետք է կազմի նախագծանախահաշվային փաստաթղթերը սահմանված ծավալով, կազմով ու բովանդակությամբ, ՀՀ գործող օրենսդրության ու տեխնիկական նորմերի, ստանդարտների և չափանիշների համաձայն և ապահովի տվյալ օբյեկտի շինարարական և վերահսկողական աշխատանքների ճիշտ կազմակերպումը և իրականացումը:

Նախագծանախահաշվային փաստաթղթերը պետք է կազմված լինեն նախագծային մասից (բացատրագիր, գծագրեր, տեխնիկական մասնագրեր), աշխատանքների ծավալների ցուցակից և ճարտարագիտական նախահաշվից:

Խնդրո առարկա յուրաքանչյուր կառուցվածքի համար առանձին գծագրերի ներկայացում՝ համապատասխան մասնագրերով և ծավալաթերթ-նախահաշվով: Գծագրերը պետք է իրականացված լինեն համապատասխան մասշտաբով, նիշերով, խորությունը, բարձրությունը և երկարությունը բնութագրող չափման գծերով: Գծագրում ներկայացված կտրվածքի ընտրությունը և քանակը պետք է բնութագրի ամբողջ կառուցվածքը՝ ներկայացված բոլոր ծավալների ճշգրիտ հաշվարկով:

Կազմել Շինարարության ժամանակավոր շինությունների և նախապատրաստական համապատասխան աշխատանքների կազմակերպման, մանրամասն գծագրեր, մասնագրեր, նախահաշիվ, ինչպես նաև ծավալաթերթ-նախահաշիվ:

Կազմել շինմոնտաժային աշխատանքների անվտանգությունը, աշխատանքների կազմակերպումը, շրջակա միջավայրի պահպանությունը համաձայն ՀՀ գործող օրենսդրության ու տեխնիկական նորմերի, ստանդարտների և չափանիշների համաձայն:

Շինմոնտաժային աշխատանքների տեխնիկական պայմանների պատրաստում:

Շինմոնտաժային աշխատանքների ծախսերի հաշվարկ:

Շինմոնտաժային աշխատանքների ընդհանուր հաշվարկ (գաղտնի նախահաշիվ) առանձին մատակարարման ու շինարարական աշխատանքների և ներմուծվելիք բաղադրիչների համար:

Մանրամասն մասնագրեր՝ պահանջվող տեխնիկական և շահագործման սարքավորումների, պահեստամասերի, նորոգման նյութերի, սարքավորումների և տրանսպորտային միջոցների համար, որոնք պետք է գնվեն ծրագրի շրջանակներում:

Նյութերի և սարքավորումների առաքման ծախսերի հաշվարկ:

համապատասխան ՏԻՄ-ի հետ համաձայնեցնել ՀՏԿ-ի վերակառուցման ժամանակ աղբաթափման տեղը:

Նախագծողը պետք է գնահատի և առաջարկի ջրի տեղափոխման այլ տարբերակներ և ներկայացնի առաջարկված վերականգնման տարբերակի առավելությունները և տնտեսական շահութաբերությունը հիմնավորող համապատասխան հաշվարկներ:

Տեխնիկական պայմանների պատրաստում՝ նյութերի և սարքավորումների առաքման համար:

Շինարարական աշխատանքների կատարման ընթացքում նախագծային շեղումներ առաջանալու դեպքում նախագծողը պարտավորվում է նախագծում կատարել շտկումներ իր հաշվին:

Գծագրեր

Գծագրերը պետք է հիմնված լինեն ճարտարագիտական հետազոտությունների, հաշվարկների և վերլուծությունների արդյունքների վրա: Գծագրերը պետք է պատրաստվեն բավարար աստիճանի մանրամասնություններով, այդ թվում՝ պարունակեն այնպիսի տեղեկություններ, որոնք հնարավորություն կընձեռեն կատարելու բարձր որակի շինարարություն, մատակարարել ջրակայուն նյութեր և ճշգրիտ որոշել աշխատանքների ծավալները: Մանրամասն նախագծային հաշվետվության մեջ մանրամասն նախագծի հիման վրա պատրաստվում և ներկայացվում է գծագրերի ցանկը, այդ թվում՝ տեղանքի հատակագծերը: Գծագրերի փաթեթը կազմված կլինի ընդհանուր գծագրերից, մանրամասն գծագրերից, երկայնական և լայնական կտրվածքներից, որտեղ կերևան աշխատանքների չափերը և անհրաժեշտ նյութերը: Գծագրերի ներկայացման, նրանց ձևի, քանակի և մասշտաբի, հետազոտական աշխատանքների մասին անհրաժեշտ մանրամասն տեղեկությունները նկարագրվում են գործող նորմատիվ ակտերում (ՇՆևԿ-երում/շինարարական նորմերում և ՊՍ-երում (պետական ստանդարտներում):

Տեխնիկական մասնագրեր

Շինարարական աշխատանքների ,Տեխնիկական մասնագրերըե ներառում են աշխատանքների կատարման դրույթների և պայմանների մանրամասն նկարագիրը, այդ թվում հստակ մասնագրեր, առանձին՝ համակարգերի խնդրո առարկա հատվածներում նախատեսվող կառուցվածքների համար, ներառելով կատարվելիք աշխատանքը, որոնք կլրացնեն համապատասխան գծագրերի վրա տեղ գտած տեղեկությունը: Մասնագրերի հիշյալ նկարագրերը կներառեն նաև ժամանակավոր շինություններ, աշխատանքների կազմակերպման մանրամասն գծագրեր և ծավալաթերթ և նախահաշիվ, ինչպես նաև ծավալաթերթ-նախահաշիվ, նախատեսվող տարածքին համապատասխան, աշխատանքների իրականացման մանրամասն նկարագրություն, ինչպես նաև տեխնիկական անվտանգություն՝ համաձայն տեղական և միջազգային չափանիշների: Բացի դրանից, դրանք ներառում են նյութերի, ապրանքների և ծառայությունների պահանջվող ստանդարտները և սահմանում Կապալառուի համար պարտադիր աշխատանքային ծրագիր: Տեխնիկական մասնագրերը կազմում են մրցութային փաստաթղթերի մաս:

Նախագծողի կողմից պատրաստված Տեխնիկական մասնագրերը պետք է ներառեն շինարարական աշխատանքների բոլոր այն տեսակները, որոնք անհրաժեշտ են կիրառել/իրականացնել շինարարության ընթացքում: Դրանք պետք է հատուկ հարմարեցված լինեն յուրաքանչյուր շինարարական փաթեթին:

Տեխնիկական մասնագրերի վերջում ,Հավելվածիե տեսքով ներառվում են շինարարության գործընթացի անընդմեջությունն/անընդհատությունն ապահովող փաստաթղթեր, ինչպես օրինակ՝ հենանիշերի ցանկ, կոորդինատների ցանկ, գազատարների, մալուխների, ճանապարհների և այլ ենթակառուցվածքների հետ հատումների, անհրաժեշտության դեպքում՝ համակարգում շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում ջրի մատակարարման հնարավոր դադարեցման կամ վերսկսելու, ռեզերվային կամ թափոնային հրապարակների, հողի ձեռքբերման և այլ անհրաժեշտ հարցերի հետ կապված համաձայնեցումները գերատեսչական մարմինների հետ, փորձագիտական եզրակացություններ, տեխնիկական պայմաններ, ինչպես նաև Ծրագրի իրականացման համար պահանջվող փաստաթղթեր:

Աշխատանքների ծավալների ցուցակ-նախահաշիվ

Շինարարական աշխատանքների պլանավորման համաձայն՝ նախագծող կազմակերպությունը պետք է պատրաստի աշխատանքների ծավալների ճարտարագիտական նախահաշիվներ: Այդ ծավալները ներառվում են աղյուսակի մեջ, որը այսուհետև կկոչվի ,Աշխատանքների ծավալների ցուցակ-նախահաշիվե (ԱԾՑՆ), որն ընդգրկվում է մրցութային

փաստաթղթերի մեջ: Կատարողը պետք է պատրաստի պարզեցված ԱԾՑՆ՝ յուրաքանչյուր համակարգի խնդրո առարկա հատվածում նախատեսվող կառույցի համար, որը կներառի բավարար քանակությամբ աշխատանքների նկարագրություն՝ ծավալների ողջամիտ մանրամասներով: ԱԾՑՆ-ն պետք է բաղկացած լինի ամփոփ ԱԾՑՆ-ից և ԱԾՑՆ-ի առանձին բաժիններից (հողային, բետոնային, տեխնոլոգիական և այլ աշխատանքների): ԱԾՑՆ-ի առանձին բաժինները ներկայացվում են առանձին էջերի վրա և համաձայնեցվում են Պատվիրատուի հետ:

ԱԾՑՆ-ն չպետք է ներառի շինարարության կազմակերպման, տեխնոլոգիական սխեմաների և գործարկման հետ կապված աշխատանքների ծավալները՝ բացառությամբ այն աշխատանքների, որոնք նախագծում սահմանվում են որպես պարտադիր աշխատանքներ:

Ճարտարագիտական նախահաշիվների պատրաստում

Շինարարական աշխատանքների ,Ճարտարագիտական նախահաշիվները չեն ներառվում մրցութային փաստաթղթերի մեջ: Դրանք նախատեսված են Պատվիրատուին օբյեկտի նախահաշվային արժեքի մասին տեղեկություն տալու համար: Նման տեղեկությունից օգտվելու հնարավորություն ունեցողներին կամ այն պատրաստողներին խստորեն արգելվում է դրա մասին հայտնել որևիցե մեկին, մասնավորապես կապալառուներին և մատակարարներին:

Անհրաժեշտության դեպքում, շինարարական նյութերի գների կտրուկ փոփոխության պարագայում, մինչև սահմանված կարգով կապալառուի ընտրությունը, պատվիրատուն իրեն իրավունք է վերապահում պայմանագրի կողմի հանդիսացող նախագծողից պահանջել նաև իր միջոցների հաշվին իրականացնել նախահաշվի վերահաշվարկ, նաև՝ սահմանված կարգով համապատասխան փորձաքննության դրական եզրակացության ապահովումը:

Ընդհանուր հավելվածներ

Ընդհանուր հավելվածներում ներառվում են այնպիսի նյութեր, որոնք անմիջականորեն կապված չեն շինարարության հետ, օրինակ՝

- առաջադրանքի պայմաններ,
- թերությունների ակտեր,
- հանդիպումների արձանագրություններ,
- եզրակացություններ (նյութերի փորձարկումների, կառույցների և այլնի մասին),
- նամակներ,
- լուսանկարներ,
- ԱԾՑՆ-ի հոդվածների և շուկայական գների համապատասխանության ցանկ,
- Սարքերի և սարքավորումների ցանկ,
- նախագծման ընթացքում պատրաստված այլ նյութեր:

Մրցութային փաստաթղթերի պատրաստում

Կատարողը պետք է մշակի և Պատվիրատուին ներկայացնի նաև մրցութային փաստաթղթերը, որոնք կներառեն.

Գծագրեր,

Տեխնիկական մասնագրեր,

Աշխատանքների ծավալների ցուցակ,

Հավելվածներ.

Ճարտարագիտական ծավալաթերթ և նախահաշիվ, ինչպես նաև ծավալաթերթ-նախահաշիվ

Ընդհանուր հավելվածներ:

Կատարողը պետք է պատրաստի առանձին մրցութային փաստաթղթեր, որի կազմը կհամաձայնեցվի Պատվիրատուի հետ, կազմվում է նաև առանձին նախահաշիվ:

Աշխատանքների ավարտը, տնտեսությունը և վճարումները

Ավարտված նախագծանախահաշվային փաստաթղթերի ամբողջ փաթեթը կնքված և ստորագրված ձևով ներկայացվում է պատվիրատուին: Փաստաթղթերի հանձնումը համարվում է ավարտված, պատվիրատուի կողմից վերջնական ընդունումից հետո:

Նախագծային կազմակերպության կողմից ներկայացվող փաստաթղթերը ներառում են

Բացատրական մաս և տեխնիկական մասնագրեր – 4 օրինակ հայերեն և 1 օրինակ ռուսերեն,

Գծագրական մաս – 4 օրինակ հայերեն և 1 օրինակ ռուսերեն,

Աշխատանքների ծավալների ցուցակ - 4 օրինակ հայերեն և 1 օրինակ ռուսերեն,

Աշխատանքի կազմակերպում- 2 օրինակ հայերեն և 1 օրինակ ռուսերեն

Ծավալաթերթ-նախահաշիվ - 2 օրինակ հայերեն և 1 օրինակ ռուսերեն

Շուկայական գներով ճարտարագիտական նախահաշիվներ - 2 օրինակ հայերեն և 1 օրինակ ռուսերեն,

Նախագծողը պետք է փաստաթղթերի հետ ներկայացնի նաև ամբողջական նախագծի էլեկտրոնային տարբերակ՝ հայերեն և ռուսերեն լեզուներով, նախագծի համապատասխան բաժինների համար կիրառելի Ms Word, Excell, pdf, AutoCad ֆորմատներով, էլ. կրիչով:

Փաստաթղթերը պետք է ստացած լինեն բոլոր շահագրգիռ կազմակերպությունների կողմից տվրած համաձայնեցումները (ներառյալ ջրօգտագործողների ընկերության և համայնքի հետ): Գնման փաստաթղթերը անհրաժեշտության դեպքում պետք է ներառեն ուղղումներ և լրամշակումներ՝ փորձաքննության կողմից արած դիտողությունները հաշվի առնելու համար:

Կազմված նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննությունն իրականացնելու է Պատվիրատուն:

Նախագծային կազմակերպության պարտականությունները շինարարության ընթացքում

Շինարարության ընթացքում նախագծերում տեղ գտած թերությունները և բացթողումներն ուղղվում են նախագծային կազմակերպության կողմից և նրա հաշվին:

Կապալառուի կողմից ներկայացված հիմնավոր առաջարկությունները պետք է քննարկվեն ու հաստատվեն կամ չհաստատվեն նախագծային կազմակերպության կողմից՝ Պատվիրատուի անմիջական մասնակցությամբ:

Նախագծային կազմակերպությունը, ի դեմս նախագծի գլխավոր ճարտարագետի, պարտավոր է մասնակցել այն բոլոր հարցերի քննարկումներին, որոնք կպահանջվեն Պատվիրատուի կողմից: Նախագծային կազմակերպությունը նույնպես պետք է մասնակցի ցանկացած հանձնաժողովի աշխատանքներին (ներառյալ ընդունող հանձնաժողովները), որոնք կպահանջվեն Պատվիրատուի կողմից, ինչպես նաև պետք է ստորագրի «ըստ էության» ավարտված աշխատանքների, ինչպես նաև օբյեկտը վերջնական շահագործման հանձնելու վկայագրերը: Այդ աշխատանքների արժեքը պետք է հաշվի առնված լինի նախագծային կազմակերպության ֆինանսական առաջարկում:

Բացի դրանից, նախագծի գլխավոր ճարտարագետը պարտավոր է շինարարության աշխատանքների իրականացման ընթացքում կանոնավոր կերպով այցելել օբյեկտ՝ հեղինակային հսկողություն իրականացնելու համար:

**** Նախագծերի մշակման ժամանակ նախագծային կազմակերպությունը պարտադիր կերպով պետք է ճշտի բոլոր աշխատանքների ծավալները, սակայն նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման ընդհանուր տևողությունը և գինը չի կարող փոխվել:***

Յուրաքանչյուր չափաբաժնի համար իրականացվելիք աշխատանքների համառոտ նկարագիրը, գտնվելու վայրը, շահագործող ընկերությունը

Չափաբաժնի հերթական համարը	Չափաբաժնի անվանումը	Նախագծանախահաշվային փաստաթղթերով նախատեսվող իրականացվելիք աշխատանքների համառոտ բնութագիրը*	Շահագործող կազմակերպության անվանումը	Գտնվելու վայրը
1	Աշտարակի մայր ջրանցքի ՊԿ0+00-ՊԿ20+00 հատվածի վերանորոգում	Ջրանցքի մոտ 2000մ հատվածի վերականգում	«Արագածոտն» ՋՕԸ	ՀՀ Արագածոտնի մարզ
2	«Արազափ-1» ջրհան կայանի երկրորդ գոտու աջ հեռացնող ջրատարի վերակառուցում	Երկաթբետոնե վաքերով ջրանցքի կառուցում, շուրջ L=2100մ, ներառյալ մոտ 25 հատ ջրթող հանգույցները հարթ փականներով	«Արարատ» ՋՕԸ	ՀՀ Արարատի մարզ
4	Մրգաշատ համայնքի Սոնեյի և Վալոդի խորքային հորերի հեռացնող ջրանցքների ինչպես նաև դրանց հատման տեղից դեպի հողատարածքներ գնացող ջրանցքների վերակառուցում	Երկաթբետոնե վաքերով ջրանցքի կառուցում, L=1950մ, ներառյալ 196 ջրթող հանգույցներ	«Արմավիր» ՋՕԸ	ՀՀ Արամավիրի մարզ
7	Ծովինարի մեծ առու ջրանցքի հիմնանորոգում	Շուրջ 1500 գծ.մ խողովակաշարի կառուցում և ջրթող հանգույցներ	«Գեղարքունիք» ՋՕԸ	ՀՀ Գեղարքունիքի մարզ
10	Բարձրաշենի հեռացնող ջրանցքի մոտ 400 մ հատվածի վերակառուցում	Ջրանցքի առանձին հատվածների մոտ 400մ-ի վերականգման աշխատանքներ	«Երևան» ՋՕԸ	ՀՀ Արարատի մարզ և Երևան քաղաք
12	Բ-1 և Բ-1-1 ջրանցքների վերակառուցում	Բ-1 ջրանցքի վթարային հատվածների վերականգման աշխատանքներ ՊԿ00+00-ՊԿ04+80 և ՊԿ38+00-ՊԿ43+00, ներառյալ ջրթող հանգույցները Բ-1-1 ջրանցքի վթարային հատվածների վերականգման աշխատանքներ ՊԿ13+00-ՊԿ20+60 ներառյալ ջրթող հանգույցները	«Էջմիածին» ՋՕԸ	ՀՀ Արմավիրի մարզ
17	Արտամետի «Ջույգ ցանց» ներտնտեսային ջրանցքի վերակառուցում	D=400մմ տրամագծով երկու ասբոցեմենտային խողովակաշարի փոխարինում	«Շենիկ» ՋՕԸ	ՀՀ Արմավիրի մարզ
18	Աջափնյա ջրանցքի առավել վթարային հատվածների վերակառուցում	Ջրանցքի ՊԿ130+42-ՊԿ151+81 և ՊԿ157+41-ՊԿ172+20 վթարային հատվածների վերականգման աշխատանքներ ներառյալ ջրթող հանգույցներ	«Շիրակ» ՋՕԸ	ՀՀ Շիրակի մարզ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Ջրային կոմիտե
ՀՀ ք. Երևան, Վարդանանց 13ա
Հ/Հ 900011567386
ՀՎՀՀ 02555816
Կոմիտեի գլխավոր քարտուղար

Ա. ՂԱԶԱՐՅԱՆ
(ստորագրություն)
Կ. Տ.

ԿԱՏԱՐՈՂ

«Մոդուլ» ՍՊԸ
Ք. Երևան, Ն.Զարյան 22, տարածք 3
էլ. հասցե info@modul.am
«ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ Կոմիտաս մ/ճ
Հ/Հ 11500404281400
ՀՎՀՀ 05020542

Ն. ՀԱԿՈԲՅԱՆ
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 2
«04» մարտի 2024թ. կնքված
ՋԿ-ԳՀԾՁԲ-24/1-Ն ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Անվանում	Ծառայության դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2024թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**										
			մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	71241200/1	Նախագծերի պատրաստում, ծախսերի գնահատում - Աշտարակի մայր ջրանցքի ՊԿ0+00-ՊԿ20+00 հատվածի վերանորոգում	660 000	3 300 000	3 300 000	3 300 000	3 300 000	3 300 000	3 300 000	3 300 000	3 300 000	3 300 000	3 300 000
2	71241200/2	Նախագծերի պատրաստում, ծախսերի գնահատում - «Արազափ-1» ջրհան կայանի երկրորդ գոտու աջ հեռացնող ջրատարի վերակառուցում	327 600	1 638 000	1 638 000	1 638 000	1 638 000	1 638 000	1 638 000	1 638 000	1 638 000	1 638 000	1 638 000
4	71241200/4	Նախագծերի պատրաստում, ծախսերի գնահատում - Մրգաշատ համայնքի Սոնեյի և Վալոդի խորքային հորերի հեռացնող ջրանցքների ինչպես նաև դրանց հատման տեղից դեպի հողատարածքներ գնացող ջրանցքների վերակառուցում	639 000	3 195 000	3 195 000	3 195 000	3 195 000	3 195 000	3 195 000	3 195 000	3 195 000	3 195 000	3 195 000
7	71241200/7	Նախագծերի պատրաստում, ծախսերի գնահատում - Ծովինարի մեծ առու ջրանցքի հիմնանորոգում	420 000	2 100 000	2 100 000	2 100 000	2 100 000	2 100 000	2 100 000	2 100 000	2 100 000	2 100 000	2 100 000

10	71241200/10	Նախագծերի պատրաստում, ծախսերի գնահատում - Բարձրաշենի հեռացնող ջրանցքի մոտ 400 մ հատվածի վերակառուցում	624 000	3 120 000	3 120 000	3 120 000	3 120 000	3 120 000	3 120 000	3 120 000	3 120 000	3 120 000	3 120 000
12	71241200/12	Նախագծերի պատրաստում, ծախսերի գնահատում - P-1 և P-1-1 ջրանցքների վերակառուցում	564 000	2 820 000	2 820 000	2 820 000	2 820 000	2 820 000	2 820 000	2 820 000	2 820 000	2 820 000	2 820 000
17	71241200/17	Նախագծերի պատրաստում, ծախսերի գնահատում - Արտամետի «Զույգ ցանց» ներտնտեսային ջրանցքի վերակառուցում	540 000	2 700 000	2 700 000	2 700 000	2 700 000	2 700 000	2 700 000	2 700 000	2 700 000	2 700 000	2 700 000
18	71241200/18	Նախագծերի պատրաստում, ծախսերի գնահատում - Նախագծերի պատրաստում, ծախսերի գնահատում - Աջափնյա ջրանցքի առավել վթարային հատվածների վերակառուցում	780 000	3 900 000	3 900 000	3 900 000	3 900 000	3 900 000	3 900 000	3 900 000	3 900 000	3 900 000	3 900 000

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Ջրային կոմիտե
ՀՀ ք. Երևան, Վարդանանց 13ա
Հ/Հ 900011567386
ՀՎՀՀ 02555816
Կոմիտեի գլխավոր քարտուղար

_____ Ա. ՂԱԶԱՐՅԱՆ
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

«Մոդուլ» ՍՊԸ
Ք. Երևան, Ն.Զարյան 22, տարածք 3
էլ. հասցե info@modul.am
«ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ Կոմիտաս մ/ճ
Հ/Հ 11500404281400
ՀՎՀՀ 05020542

_____ Ն. ՀԱԿՈԲՅԱՆ
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված 3
«04» մարտի 2024թ. կնքված
ՋԿ-ԳՀԾՁԲ-24/1-Ն ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
«04» մարտի 2024թ. կնքված
ՋԿ-ԳՀԾՁԲ-24/1-Ն ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն